evocaBANK

ԱՎԱՆԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

Կոդ TRM15-0004-06/4 PUB	Խմբագրություն 32
Կազմեց	Հաստատված
Բիզնես գործընթացների կառավարման բաժին	Վարչության Վարչության 26/05/2026թ. թիվ 17_1 արձանագրությամբ Վարչության նախագահ՝ Կարեն Եղիազարյան_____
Կիրառման ոլորտ	Ժամկետային ավանդների ներգրավման գործընթացում ներգրավված կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ
Վերանայման համար պատասխանատու ստորաբաժանում	Հաճախորդների սպասարկման վարչություն
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	09/06/2026թ.
Ուժը կորցնելու ամսաթիվ	

1. Ընդհանուր դրույթներ

1.1. «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) իրականացնում է իրավաբանական և ֆիզիկական անձանցից (ռեզիդենտ, ոչ ռեզիդենտ) ժամկետային ավանդների (այսուհետ՝ Ավանդ) ներգրավում:

1.2. Ավանդները ներգրավվում են՝ ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, Եվրոյով և ՌԴ ռուբլով:

1.3. Ավանդներն ընդունվում են ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով: Ավանդների դիմաց հաշվեգրվող տոկոսագումարների վճարումն իրականացվում է ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով:

1.4. Ֆիզիկական անձ հաճախորդի կողմից Ավանդի ներդրումը ձևակերպվում է Բանկի կողմից սահմանված ձևի Հայտ-պայմանագիրը ստորագրելով և/կամ էլեկտրոնային հայտ ներկայացնելով: Հայտ-պայմանագրում/էլ. հայտում նշվում է Ավանդի տեսակը, գումարը, արժույթը, ժամկետը, տոկոսադրույքը և ըստ անհրաժեշտության այլ պայմաններ:

1.5. Ֆիզիկական անձ հանդիսացող Ավանդատուների ավանդները երաշխավորվում են համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի: Երաշխավորված ավանդների չափերին Հաճախորդները կարող են ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքում, Ավանդների տեղեկատվական ամփոփագրում, ինչպես նաև Ավանդ ներդնելու դեպքում վերջինիս տրամադրվող ծանուցման միջոցով:

1.6. Ավանդի գումարի վերադարձը կատարվում է Ավանդի պայմանագրի վերջին օրը, իսկ եթե տվյալ օրը ոչ աշխատանքային է, ապա հաջորդ աշխատանքային օրը:

1.7. Հաշվեգրված տոկոսների վճարումը իրականացվում է համաձայն Հաճախորդի կողմից Հայտ-պայմանագրում/Պայմանագրում նշված տոկոսների վճարման պարբերականության:

1.8. Ավանդների հետ կապված կանխիկ գործառնությունների միջնորդավճարները սահմանվում են Բանկի «Սակագներով և դրույքներով» (TRM14-0002-02/1)-ով սահմանված դրամարկղային գործառնությունների սակագներով, բացառությամբ ՌԴ ռուբլով ավանդների:

1.8.1. Կանխիկ ՌԴ ռուբլով ներդրված Ավանդը վերադարձվում է կանխիկ ՌԴ ռուբլով, իսկ անկանխիկ ՌԴ ռուբլով ներդրված Ավանդը վերադարձվում է անկանխիկ ՌԴ ռուբլով՝ առանց միջնորդավճարների գանձման:

1.8.2. Անկանխիկ ՌԴ ռուբլով ներդրված Ավանդը կանխիկ ՌԴ ռուբլով վերադարձնելու դեպքում գանձվում է վերադարձման օրը ՌԴ ռուբլու կանխիկացման համար սահմանված միջնորդավճարը:

1.8.3. Կանխիկ ՌԴ ռուբլով ներդրված Ավանդը անկանխիկ ՌԴ ռուբլով վերադարձնելու դեպքում գանձվում է վերադարձման օրը կանխիկ ՌԴ ռուբլու մուտքագրման համար սահմանված միջնորդավճարը:

1.9. Արտարժույթով ներդրված ավանդների դիմաց հաշվեգրված տոկոսագումարները ավանդատուի ցանկությամբ կարող են վճարվել այն արտարժույթով, որով ներգրավվել է ավանդը, ինչպես նաև ՀՀ դրամով՝ հիմք ընդունելով վճարման օրը տվյալ արտարժույթի համար Բանկի կողմից սահմանված անկանխիկ առքի փոխարժեքը:

2. Բանկի կողմից ընդունվող Ավանդների տեսակները և պայմանները՝

2.1. Ավանդ «Դասական»

Նվազագույն գումար և արժույթ	Տոկոսների վճարման եղանակը	Ընդունման ժամկետներն ըստ օրերի քանակի						
		31 - 90 օր	91 - 180 օր	181 - 270 օր	271 - 365 օր	366 - 549 օր	550 - 730 օր	731 - 1825 օր
100,000 ՀՀ դրամ	Տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ	4.50 %	6.00 %	7.00 %	8.00 %	9.50 %	10.00 %	10.50 %
	Ամենամյա տոկոսների վճարմամբ	4.00 %	5.50 %	6.50 %	7.50 %	9.00 %	9.50 %	10.00 %
	Տոկոսները եռամսյա վճարմամբ	-	5.50 %	6.50 %	7.50 %	9.00 %	9.50 %	10.00 %
200 ԱՄՆ դոլար	Տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ	0.75 %	2.00 %	2.50 %	3.00 %	4.00 %	4.50 %	5.00 %
	Ամենամյա տոկոսների վճարմամբ	0.50 %	1.75 %	2.25 %	2.75 %	3.75 %	4.25 %	4.75 %
	Տոկոսները եռամսյա վճարմամբ	-	1.75 %	2.25 %	2.75 %	3.75 %	4.25 %	4.75 %
200 Եվրո	Տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ	0.35 %	1.00 %	1.50 %	1.75 %	2.00 %	2.50 %	3.00 %
	Ամենամյա տոկոսների վճարմամբ	0.25 %	0.75 %	1.25 %	1.50 %	1.75 %	2.25 %	2.75 %
	Տոկոսները եռամսյա վճարմամբ	-	0.75 %	1.25 %	1.50 %	1.75 %	2.25%	2.75 %
30,000 ՌԴ Ռուբլի	Տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ	4.00 %	5.00 %	5.25 %	5.50 %	6.00 %	-	-
	Ամենամյա տոկոսների վճարմամբ	3.75 %	4.75 %	5.00 %	5.25 %	5.75 %	-	-
	Տոկոսները եռամսյա վճարմամբ	-	4.75 %	5.00 %	5.25 %	5.75 %	-	-

2.1.1. Ավանդն ընդունվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից, ինչպես Բանկի գործունեության վայրում, այնպես էլ՝ «EvocaTouch» կամ «EvocaOnline» հեռակառավարման համակարգերի միջոցով:

2.1.2. Ավանդատուն կարող է համալրել (ավելացնել) իր Ավանդի գումարը սկսած նվազագույնը 40,000 ՀՀ դրամից, 100 ԱՄՆ դոլարից, 100 Եվրոյից կամ 10,000 ՌԴ ռուբլուց:
Ավելացման հնարավորությամբ ավանդ ներդնելու դեպքում ՀՀ դրամով ավանդների համար սահմանվում է վերոնշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.5 %-ով պակաս տոկոսադրույք, իսկ ԱՄՆ դոլարով, Եվրոյով և ՌԴ ռուբլով ավանդների համար սահմանվում է վերոնշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.25 %-ով

պակաս տոկոսադրույք: Կատարված բոլոր համալրումների հանրագումարը չի կարող գերազանցել Ավանդի ներդրման սկզբնական գումարը: Ավանդային պայմանագրի գործողության վերջին 3 (երեք) ամիսների ընթացքում Ավանդի գումարի համալրում չի թույլատրվում:

2.1.3. Ավանդի գումարի մասնակի նվազեցում չի թույլատրվում:

2.1.4. Ավանդատուի պահանջով ավանդային պայմանագիրը ժամկետից շուտ լուծելու դեպքում Բանկն իրականացնում է Ավանդի տոկոսագումարների վերահաշվարկ հետևյալ դրույքաչափերով՝

Ավանդի արժույթ	**Տարեկան տոկոսադրույք ըստ ժամկետների**	
	Մինչև 365 օր	**366 - 1095 օր**
ՀՀ դրամ	0.50 %	8.50 %
ԱՄՆ դոլար	0.10 %	3.50 %
Եվրո	0.10 %	1.50 %
ՌԴ ռուբլի	0.10 %	5.00 %

2.2. Ավանդ «Էվոկա Online»

Նվազագույն գումար և արժույթ	**Տոկոսների վճարման եղանակը**	**Ընդունման ժամկետներն ըստ օրերի քանակի**						
		31 - 90 օր	**91 - 180 օր**	**181 - 270 օր**	**271 - 365 օր**	**366 - 549 օր**	**550 - 730 օր**	**731 - 1825 օր**
100,000 ՀՀ դրամ	Տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ	4.50 %	6.00 %	7.00 %	8.00 %	9.75 %	10.25 %	10.75 %
	Ամենամյա տոկոսների վճարմամբ	4.00 %	5.50 %	6.50 %	7.50 %	9.25 %	9.75 %	10.25 %
	Տոկոսները եռամսյա վճարմամբ	-	5.50 %	6.50 %	7.50 %	9.25 %	9.75 %	10.25 %
200 ԱՄՆ դոլար	Տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ	0.75 %	2.00 %	2.50 %	3.00 %	4.25 %	4.75 %	5.25 %
	Ամենամյա տոկոսների վճարմամբ	0.50 %	1.75 %	2.25 %	2.75 %	4.00 %	4.50 %	5.00 %
	Տոկոսները եռամսյա վճարմամբ	-	1.75 %	2.25 %	2.75 %	4.00 %	4.50 %	5.00 %
200 Եվրո	Տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ	0.35 %	1.00 %	1.50 %	1.75 %	2.25 %	2.75 %	3.25 %
	Ամենամյա տոկոսների վճարմամբ	0.25 %	0.75 %	1.25 %	1.50 %	2.00 %	2.50 %	3.00 %
	Տոկոսները եռամսյա վճարմամբ	-	0.75 %	1.25 %	1.50 %	2.00 %	2.50 %	3.00 %
30,000 ՌԴ Ռուբլի	Տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ	4.00 %	5.00 %	5.25 %	5.50 %	6.25 %	-	-
	Ամենամյա տոկոսների վճարմամբ	3.75 %	4.75 %	5.00 %	5.25 %	6.00 %	-	-
	Տոկոսները եռամսյա վճարմամբ	-	4.75 %	5.00 %	5.25 %	6.00 %	-	-

2.2.1. Ավանդն ընդունվում է ֆիզիկական անձանցից **բացառապես** EvocaTouch» կամ «EvocaOnline» հեռակառավարման համակարգերի միջոցով:

2.2.2. Ավելացման հնարավորությամբ ավանդ ներդնելու դեպքում ՀՀ դրամով ավանդների համար սահմանվում է վերոնշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.5 %-ով պակաս տոկոսադրույք, իսկ ԱՄՆ դոլարով, Եվրոյով և ՌԴ ռուբլով ավանդների համար սահմանվում է վերոնշյալ սանդղակի տոկոսադրույքներից 0.25 %-ով պակաս տոկոսադրույք: ~~Նվազ դեպքում ա~~Ավանդի համալրումները կարող են իրականացվել ինչպես Բանկի գործունեության վայրում, այնպես էլ ~~իրականացվում են **բացառապես**~~ «EvocaTouch» կամ «EvocaOnline» հեռակառավարման համակարգերի միջոցով: Ավանդատուն կարող է համալրել (ավելացնել) իր Ավանդի գումարը սկսած նվազագույնը 40,000 ՀՀ դրամից, 100 ԱՄՆ դոլարից, 100 Եվրոյից կամ 10,000 ՌԴ ռուբլուց: Կատարված բոլոր համալրումների հանրագումարը չի կարող գերազանցել՝

2.2.2.1. ՀՀ դրամի դեպքում Ավանդի ներդրման սկզբնական գումարի կրկնապատիկը,

2.2.2.2. ԱՄՆ դոլարի, Եվրոյի և ՌԴ ռուբլու դեպքում Ավանդի ներդրման սկզբնական գումարը:

Ավանդային պայմանագրի գործողության վերջին 3 (երեք) ամիսների ընթացքում Ավանդի գումարի համալրում չի թույլատրվում:

2.2.3. Ավանդի գումարի մասնակի նվազեցում չի թույլատրվում:

2.2.4. Ավանդատուի պահանջով ավանդային պայմանագիրը ժամկետից շուտ լուծելու դեպքում Բանկն իրականացնում է Ավանդի տոկոսագումարների վերահաշվարկ հետևյալ դրույքաչափերով՝

Ավանդի արժույթ	Տարեկան տոկոսադրույք ըստ ժամկետների	
	Մինչև 365 օր	366 - 1095 օր
ՀՀ դրամ	0.50 %	8.50 %
ԱՄՆ դոլար	0.10 %	3.50 %
Եվրո	0.10 %	1.50 %
ՌԴ ռուբլի	0.10 %	5.00 %

2.3. Ավանդ «Մանկական»

Նվազագույն գումար	Տարեկան տոկոսադրույք
100,000 ՀՀ դրամ	9.50 %
250 ԱՄՆ դոլար	4.50 %

2.3.1. Ավանդն ընդունվում է ֆիզիկական անձանցից, հօգուտ երեխաների Ավանդ ներդնելու պայմանով՝ 2 տարուց մինչև երեխայի 18 տարին լրանալը:

2.3.2. Որպես ավանդատու կարող են հանդես գալ ինչպես երեխաների օրինական ներկայացուցիչները (ծնողները, խնամակալները), այնպես էլ երրորդ անձիք:

2.3.3. Տոկոսագումարների վճարումը կամ կապիտալացումը իրականացվում է ամենամյա պարբերականությամբ:

2.3.4. Ավանդը կարող է համալրվել (ավելացվել)՝ սկսած նվազագույնը 40,000 ՀՀ դրամից կամ 100 ԱՄՆ դոլարից: Մեկ ամսվա ընթացքում համալրումների ընդհանուր գումարը 5,000,000 ՀՀ դրամը կամ 10,000 ԱՄՆ դոլարը գերազանցելու դեպքում անհրաժեշտ է Բանկի Վարչության որոշումը: Ավանդային պայմանագրի գործողության վերջին 3 (երեք) ամիսների ընթացքում Ավանդի գումարի համալրում չի թույլատրվում:

2.3.5. Հօգուտ երեխաների բացված ժամկետային ավանդները տնօրինվում են երեխայի օրինական ներկայացուցիչների կամ երրորդ անձանց կողմից, օրենքով նախատեսված դեպքերում մինչև երեխայի 18 տարին լրանալը:

2.3.6. Կնքման օրից սկսած 2 տարվա ընթացքում պայմանագիրը դադարեցնելու դեպքում իրականացվում է Ավանդի տոկոսագումարների վերահաշվարկ ՀՀ դրամ 0.5%, ԱՄՆ դոլար 0.1% տարեկան տոկոսադրույքով:

2.3.7. 2 տարին լրանալուց հետո պահպանվում են մինչև վերջին կապիտալացումը (վճարումը) հաշվարկված տոկոսագումարները, իսկ կապիտալացումից (վճարումից) հետո ընկած ժամանակահատվածի համար կատարվում է տոկոսագումարների վերահաշվարկ ՀՀ դրամ 0.5%, ԱՄՆ դոլար 0.1% տարեկան տոկոսադրույքով:

2.3.8. Պայմանագրի կնքման օրվանից 2 տարի հետո և այնուհետև յուրաքանչյուր հաջորդ տարի Ավանդի տոկոսադրույքը վերանայվում է՝ հիմք ընդունելով վերանայման պահին Բանկում գործող «Դասական» Ավանդատեսակի 366 օր ժամկետի համար սահմանված համապատասխան արժույթի տոկոսադրույքը:

2.3.9. Ավանդի գումարի մասնակի նվազեցում չի թույլատրվում:

3. Լրացուցիչ պայմաններ

3.1. ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ավանդատուի ցանկության դեպքում Բանկը կարող է տրամադրել վճարային քարտ առանց տարեկան սպասարկման վճարի գանձման:

3.2. Տրամադրվող վճարային քարտի տեսակները, ըստ ներդրվող ավանդի գումարի սահմանվում է ստորև.

3.2.1. **«Դասական», «Էվոկա Online» և «Մանկական» ավանդատեսակների դեպքում**

Ավանդի արժույթ/Քարտի տեսակ	ArCa Classic/ Mastercard Standard/ Visa Classic	Mastercard Gold/Evoca Travel/Visa Platinum (ըստ հաճախորդի ընտրության)	VISA Infinite
ՀՀ դրամ	500,000 – 10,000,000 (ներառյալ)	10,000,000 – 40,000,000 (ներառյալ)	40,000,000 և ավել
ԱՄՆ դոլար	1,000 – 25,000 (ներառյալ)	25,000 – 100,000 (ներառյալ)	100,000 և ավել
Եվրո	1,000 – 20,000 (ներառյալ)	20,000 – 100,000 (ներառյալ)	100,000 և ավել
ՌԴ ռուբլի	60,000 – 3,000,000 (ներառյալ)	2,000,000 – 7,000,000 (ներառյալ)	7,000,000 և ավել

3.3. Քարտերը տրամադրվում են տվյալ քարտային պրոդուկտի համար հասանելի արժույթով ըստ հաճախորդի ցանկության:

3.4. Հաճախորդի ցանկությամբ վերջինիս ընտանիքի անդամներին (ծնողներ, ամուսին/կին, չափահաս երեխաներ) կարող է տրամադրվել նույն դասի քարտ 50% զեղչով՝ բացառությամբ VISA Infinite քարտի:

3.5. Մեկ ավանդի շրջանակներում տրամադրվում է մեկ անվճար քարտ ավանդատուի անունով: Ավանդատուի կողմից 1-ից ավել ավանդներ ներդնելու դեպքում յուրաքանչյուր ավանդը դիտարկվում է առանձին:

3.6. Ավանդի ժամկետը լրանալու կամ ավանդատուի կողմից Ավանդի պայմանագիրը ժամկետից շուտ դադարեցվելու դեպքում, Ավանդի ներդրման դիմաց տրամադրված վճարային քարտի սպասարկումը շարունակվում է իրականացվել առանց տարեկան սպասարկման վճարի գանձման, մինչև վճարային քարտի սպասարկման ժամկետի ավարտը, բացառությամբ Ավանդի ներդրման դիմաց տրամադրված Visa Infinite վճարային քարտերի:

3.7. Visa Infinite վճարային քարտի քարտապանների կողմից Ավանդի պայմանագիրը ժամկետից շուտ դադարեցվելու կամ Ավանդի ժամկետը լրանալու դեպքում Բանկն իրավունք ունի փակել նաև այդ Ավանդի ներդրման դիմաց տրամադրված Visa Infiite վճարային քարտը կամ հաճախորդի ցանկության դեպքում սկսել կիրառել տվյալ պահին Բանկում գործող սակագները և դրույքները:

3.8. Տրամադրվող հասանելի քարտի դասը որոշվում է քարտի բացման պահին ավանդի գումարի չափով: Ավանդի համալրման դեպքում, եթե հաճախորդը ցանկանում է ավելի բարձր դասի քարտ, ապա գործող քարտը պետք է փակվի և բացվի նոր ավելի բարձր դասի քարտ:

3.9. Քարտի վերաթողարկումը գործողության ժամկետը լրանալու կամ այլ պատճառով, իրականացվում է.

3.9.1. Անվճար, եթե հաճախորդի ավանդը գործում է, կամ եթե վերաթողարկման պահին հաճախորդի անունով գործում է համապատասխան սահմանաչափով այլ ավանդ, և որի շրջանակներում հաճախորդին արդեն չի տրամադրվել անվճար քարտ:

3.9.2. Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագներով, եթե ավանդի ժամկետը լրացել է և չի երկարաձգվել:

3.10. Քարտերի սպասարկման այլ սակագները և պայմանները՝ համաձայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների և պայմանների: